,,Կրթություն առանց սահմանի,, ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացում

Ուսուցիչ՝ Ա.Օ.Ավետիսյան, Երևանի թիվ 20 հ/դ

Ղեկավար՝ Կ.Սարգսյան

Երևան 2023 թ.

Բովանդակություն

Բովանդակություն_____2

Ներածություն_____ 3

Ինքնուրույնություն և նախաձեռնողականություն_____ 5

Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնությանն ու նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերի ռազմավարությունը_____ 5

Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը_____ 9

Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը կենսաբանության դասավանդման ընթացքում_____ 10

Ստեղծագործական կարողություններ_____ 14

Ստեղծագործությունը խթանելու ուղիներ_____ 14

Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակի գնահատում_____ 15

Ոչ ստանդարտ դասերի վարումը ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման մոտեցում_____ 16

Եզրակացություն_____ 18

Օգտագործված գրականության ցանկ_____ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այժմ բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթական համակարգում, գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված, շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մարդկային՝դրանք ծառայեցնելով կրթական նոր ու արդիական որակների ապահովմանը: Կրթական բարեփոխումների առանցքում կրթության առաջնային խնդիր է հանդիսանում վերարժևորել սովորողների գործառույթներն ու պարտականությունները՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները: Եթե խորհրդային դպրոցում սովորողն իր ցանկությունների ու ձգտումների մեջ առավել քան կաղապարված էր՝ հաշվի առնելով տվյալ կրթական համակարգին բնորոշ առանձնահատկությունները, ապա այսօրվա սովորողն այդ տեսանկունից առավել ազատ է: Այսօրվա երեխաներին ընձեռված է նորարական ծրագրերով և տեխնոլոգիաներով կրթվելու հասանելիությունը և հնարավորությունը: Նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական նախագծողը, և արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Հարկավ, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործ մտածելու ու գործելու կարողությանը: Իսկ այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը , նախաձեռնողականությունը:

Այս կոնտեքստում առանձնակի կարևորություն ունի ,,Կենսաբանություն,, առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցչի զանազան մեթոդամանկավարժական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի ներդրումը, որի արդյունքում կարող է հասնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին, որոնցից են սովորողների ինքնուրույն, նախաձեռնող և ստեղծագործական ունակություններով զարգացած անհատի ձևավորումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, կարծիք հայտնելու, օգտվելու, վերաբերմունք արտահայտելու, կարևորելու որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործաբար մտածելու ունակությունները՝ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևրում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է շեշտադրել աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման, այդ գործընթացում կարևորել ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի գործառական դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների, աշխատելու ունակության որակի բարձրացմանը :

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է շեշտադրել ակտիվ ուսուցման արդյունավետությունը,ձևավորել ինքնակազմակերպման հմտություն, արժևորել սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, դասի ընթացքին ստեղծարար մոտեցում ցուցաբերելու կարևորությունը և նշանակությունը, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ՝ պայմանավորված կրթության նոր չափորոշչի պահանջներով, որտեղ դասավանդողն ու սովորողը հանդես են գալիս որպես համագործակցող սուբյեկտներ:

Ինքնուրույնություն և նախաձեռնողականություն

Երեխան ունի իր առանձահատուկ
տեսնելու , մտածելու և զգալու ունակությունները :
Չկա ավելի հիմար բան , քան փորձել փոխարինել դրանք մեր
ունակություններով[1]:
Ժ.Ժ.Ռուսո

Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերի ռազմավարությունը: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր, մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է, նաև անհատին հատուկ ու բնազդային հատկություններից մեկը, որին անձը ձգտում է ծնված օրվանից:

Ներկա ժամանակներում, առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ներկայիս առաջ քաշած մարտահրավերներով, քանզի ամենժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց: Վերը նշած հատկանիշները, հմտություններն ու կարողությունները, որպես կանոն, սաղմնավորվում ու զարգանում են հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը: Ուստի, հենց այստեղ է անձն իր կյանքի մի քանի առանցքային շրջափուլերում սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում: Զարգանում ու արդիականացվում է նաև կրթական համակարգը՝փորձելով գործի դնել նոր աշխարհի կանոններով ապրող մարդու կրթության իրավունքը՝ հաշվի առնելով կրթական նոր տեխնոլոգիաներն ու առաջավոր փորձը: Ուսումնական գործընթացի կենտրոնում սովորողն ու սովորեցնողն են: Դիտարկելով ուսուցչի կամ սովորեցնողի դերակատարումը ուսումնական գորընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից՝ հարկ է նշել, որ սովորեցնողի մասնագիտական և անձնային որակներն էական նշանակություն ունեն: Ժամանակակից ուսուցչի

որակներից հատկապես առանձնակի կարևորություն և ուրույն դերակատարություն ունի հանդուրժողականությունը, շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու, ոգևորելու կարողությունը, գենդերային անկողմնակալությունը և այլն: Եթե ինչ-որ ժամանակ առաջ սովորողին պարտադրվում էր այս կամ այն գիտելիքի, հմտության յուրացում՝ անտեսելով նրա դիրքորոշումն ու վերաբերմունքը, ապա այսօր երեխան ինքն է իրեն ձևավորում, իսկ ուսուցիչը պարզապես փորձում է ազդել նրա վրա ուղղորդելով: Եթե այդ ազդեցությունը չի համընկնում սովորողի ներքին աշխարհի հետ, այն ետ է մղվում երեխայի կողմից, իսկ կրթական գործընթացի բոլոր մասնակիցները փոխլրացնում են միմյանց, այդ իսկ պատճառով կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով են ուսուցիչները պատրաստ համագործակցության ու փոխվստահության մթնոլորտի ձևավորման:

Ինքնուրույնության ձևավորման նախադրյալը ազատությունն է : Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը՝ ազատելով սխալվելու վախից: Ինքնուրույնության և նախաձեռնողականության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը՝ խթանելով հնարավորություններն ու կարողությունները իրատեսորեն գնահատելու հատկանիշը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է իր իմացական գործունեությունը կազմակերպում, կարգավորում և հսկում:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանցքում պետք է դնել ակտիվ ուսուցումը, որն իրենից ենթադրում է այնպիսի մեթոդական համակարգի կիրառում, որը չի նախատեսում ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն: Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է պրակտիկ և ճանաչողական գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում սովորողների կողմից: Ակտիվ մեթոդների կիրառումն ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, մտածողության զարգացմանը: Ժամանակակից ուսուցման ակտիվ մեթոդներն ուղղված են խթանելու սովորողների մտածողությունը, որը բնութագրվում է բարձր ինտերակտիվության, մոտիվացիայի և հուզական ընկալումների առկայությամբ: Ակտիվ ուսումնական գործընթացի բնութագրիչներից են.

- խթանել և զարգացնել ճանաչողական և ստեղծագործական ունակությունները սովորողների մոտ

• բարձրացնել կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը

• ձևավորել և գնահատել մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

Ուսուցման ակտիվ (փոխգործուն) մեթոդները նպաստում են սովորողների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները անհատական, զույգերով կամ խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Փոխգործուն մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են: Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերն ու հետազոտությունները, մոդելավորումը: Փոխգործուն ուսուցման սկզբունքներն[2] են.

● փոխազդեցությունը, փոխուսուցում

● սովորողների միջև համագործակցությունը

● ինքնարտահայտման, սովորողի կարծիքի, դիրքորոշման պնդման խրախուսումը

●հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

● սովորողի իմացական գործընթացների կազմակերպումը

● հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը

● համագործակցային կարողությունների զարգացումը

● անհատական առանձնահատկությունների բացահայտումը

● հաղորդակցական ունակությունների ձևավորումը

● տրամաբանական մտածողության զարգացումը

● ինքնուրույնության խրախուսումը

● վերլուծական կարողությունների ձևավորումը:

Այնուամենայնիվ, հարկ է շեշտել, որ այս համատեքստում բնավ չեն ստորադասվում դասավանդման ավանդական մեթոդները, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը, հարցուպատասխանը: Հաճախ ուսուցման մեթոդներն ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն

[2]Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017, стр.4. 5

մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին, որ մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Սակայն գիտենք, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է, և մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել[3]: Հետևաբար սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման համար արդի պայմաններում դասավանդման մեջ առանցքային դերակատարում ունեն ՏՀՏ գործիքների կիրառումը: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած դասերն ունակ են սովորողների մոտ առաջացնել հետաքրքրություն կրթական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների հանդեպ: Սովորողը, օգտվելով իրեն հարմար համացանցային հարթակից կամ գործիքից, ինքնուրույն կարող է ուսուցանվող թեմայի շուրջ տեղեկատվություն հավաքել, հետազոտել, ծանոթանալ առցանց առաջարկվող ուսումնաօժանդակ նյութերին: Արդյունքում համացանցը սովորողի համար դառնում է գործիք, որի օգնությամբ վերջինս հեշտությամբ կարողանում է կառավարել իրեն անհրաժեշտ տեղեկատվական հոսքերը:

ՏՀՏ միջոցների կիրառումը իրապես շոշափելի ազդեցություն ունի մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: Ժամանակակից դպրոցի սովորողների գիտելիքների ձեռքբերման և մանկավարժների մասնագիտական որակների բարձրացման հիմնական խնդիրներից մեկը նրանց արհեստավարժության մեծացումն է ՏՀՏ-ի օգտագործման ոլորտում: Կրթական համակարգում հաշվիչ տեխնիկայի ներդրումը մեծ հնարավորություններ է տալիս բարելավելու և կատարելագործելու մանկավարժական մեթոդները ոչ միայն փորձի փոխանակման և ստեղծագործական գործունեության ընթացքում, այլ նաև գործնական խնդիրների լուծման ժամանակ, որոնց համար հիմք են ուսումնամեթոդական նյութերի կուտակումը, դպրոցի ներքին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը մանկավարժների և աշակերտների կողմից: ՏՀՏ-ի օգտագործումը ուսուցչին մեծ հնարավորություններ է ընձեռում առարկայի ուսուցման ժամանակ: Այսպիսով, ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցեսը դարձնում է ավելի ակտիվ, սովորողն ավելի հետաքրքրությամբ է մասնակցում դասին՝ ցուցաբերելով ինքնուրույն հետազոտելու և նախաձեռնողի դերում հանդես գալու ցանկություն:

[3] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22

Հանրակրթական դպրոցում սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերից է նաև ուսուցչի մեթոդամանկավարժական գիտելիքների ամբողջությունը: Դասի փուլերի հաջորդականության ապահովումը, նոր նյութի հաղորդման, ամփոփման կամ ամրապնդման փուլերի ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառումը, միջառարկայական ու ներառարկայական կապերի ստեղծումը իրենց հերթին շահագրգռում են պասիվ սովորողներին՝ամեն կերպ վերջիններիս բերելով ակտիվ դաշտ: Այս պարագայում ակնհայտ է, որ ուսուցիչը կարիք չի ունենա սովորողի ուշադրությունը արհեստական կերպով սևեռել դասին, քանի որ դասի ընթացքն ակտիվ է, ՏՀՏ բաղադրիչը տեղում է, զանազան փոխգործուն մեթոդները կիրառվում են, ուստի սովորողը սկսում է ցուցաբերել նախաձեռնություն, խմբային կամ անհատական աշխատանքի ժամանակ էլ՝ լավագույն արդյունքներ գրանցելու մղում[4]:

Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը

Ստեղծագործությունը որպես ունակություն ինքնարտահայտման ակտիվ ձև է, որը կարող է իրականացվել ցանկացած բանի միջոցով՝ բառ կամ շարժում, նկար կամ քանդակ, բանաստեղծություն կամ մեղեդի: Ստեղծագործական միտքը բաղկացած է նոր բան հորինելու, հնարելու ունակությունից, փոփոխություններ և նորամուծություններ ընդունելու ունակությունից, գաղափարների և հնարավորությունների փորձեր կատարելու ցանկությունից, աշխարհայացքի ճկունությունից, կատարելագործման ուղիների մշտական որոնումներից, գործընթաց, որի արդյունքը բոլորովին նոր պատկերների ստեղծումն է:

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության ձևավորումը և զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից է: Մեր օրերում ստեղծարարությունը հռչակված է մարդկային ցանկացած գործունեության անբաժանելի մաս: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ սահմանվում է ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը, ով ունակ է ստեղծագործաբար մտածելու, անորոշության պայմաններում լուծում փնտրելու,

[4] Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան, «ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում»,էջ 139

իմաստավորելու և վերաիմաստավորելու, ինտելեկտուալ դժվարությունները հաղթահարելու: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները: Ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի,իսկ դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից՝ դառնալով այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին:

Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչել ենք երկու կողմ՝ սուբյեկտ, այսինքն՝ ուսուցիչը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ աշակերտը, որին սովորեցնում են: Իսկ ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսումնառության ընթացքում թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են[5]:

Այսօր ստեղծագործական գործունեությունը բարձր է գնահատվում և մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա: Ներկայումս կրթական համակարգի բարեփոխումների առանցքային հիմնահարցերից մեկը սովորողների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումն է:

Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը կենսաբանության դասավանդման ընթացքում: Սովորողի ստեղծագործական զարգացումը հիմնականում իրականացնում է դպրոցը: Հատկապես կենսաբանության դասընթացի շրջանակներում հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ սովորողը հնարավորություն ունի իր ստեղծագործական ունակությունները զարգացնելու՝ համադրելով գիտելիքի ստացման գործընթացի հետ: Կենսաբանության դասընթացը դպրոցում առաջին հերթին նպատակ ունի ակադեմիական գիտելիքների հաղորդման, կրթական տարբեր մակարդակներում դրա ծավալների խորացման, հայերենով գրագետ մտքերի փոխանակման, և հմտորեն կարող է իրականացնել ստեղծագործական ունակությունների ախտորոշում

[5] Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014, էջ12:

և դրանց զարգացման ու դրսևորման մակարդակի որոշում: Ուսուցիչը ամեն կերպ պետք է նպաստի այս կարողության զարգացմանը, որը կհամապատասխանի տարիքային առանձնահատկություններին: Շատ կարևոր է կենսաբանության դասաժամերի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ժամանակ սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի, վերլուծի, նոր լուծումներ գտնի: Ակտիվ, բնական խոսքը,սեփական մտքերը առանց կաշկանդվելու և սխալվելու վախի արտահայտելը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն, բացահայտի իր ստեղծագործական ներուժը, կիրառի տարաբնույթ առաջադրանքների իրականացման ժամանակ: Հիրավի, կայուն գիտելիքների հաղորդումը միջին և ավագ դպրոցում արդյունավետ կարելի է համարել միմիայն այն պարագայում, երբ դրանք ուղորդվում են ստեղծագործ մտքով: Կենսաբանության դասաժամին սովորողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու արդյունավետ միջոց է նաև համեմատելու, առաջարկություններ սահմանելու, ճիշտ որոշումներ գտնելու, ելք գտնելու, հուզական բաղադրիչն օգտագործելու, նպատակասլացություն, ինտուիցիա և այլ ունակություններ, զարգացնում ենք ստեղծարարությունը, որը անհատի բազմաթիվ որակների միաձուլումն է: Սովորողներին կարելի է հանձնարարել հետազոտական, անհատական աշխատանքներ իրականացնել, որոնց իրականացման ճանապարհին նրանց մոտ խորանում է ինքնուրույն աշխատելու ձգտումը, աշխատանքին ստեղծագործաբար մոտեցումը: Նաև սովորողների ստեղծարարության, ինքնուրույնության և նախաձեռնողի դերում հանդես գալու մղումները համատեղելի են նախագծային ուսուցման հետ: Ուսուցման այս մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որը նոր իրողություն է մեր կրթական համակարգում և դեռ փորձարկումների փուլում է: Ուսուցման նախագծային մեթոդի կենտրոնում սովորողն է, իսկ ուսուցչը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Հետևաբար նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է :Եվ որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և

ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Կենսաբանության դասընթացը լայն հնարավորություններ է ստեղծում նախագծային մեթոդի կիրառման համար: Օրինակ՝ աշակերտները կարող են հավաքել հետաքրքիր նյութեր՝ հերբարիում, պտուղներ, սերմեր,փետուրներ,լքված թռչնաբներ, դրանց հիման վրա կարող են կազմել ճանաչողական հոլովակներ, զեկույցներ: Եվ այսօրինակ առաջադրանքների կատարումը ևս կարող է բարձրացնել սովորողների մոտիվացիան՝ օժտելով նրանց նոր գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով, իսկ մեթոդական զանազան հնարների կիրառումը թույլ է տալիս ուսուցչին արդյունավետ կիրառել դասաժամը: Այսպես որևէ սովորող դասին պասիվ չի մնում, բոլորն աշխատում են, հետազոտում, լուծում իրենց առաջ դրած խնդիրը: Բացի այս ակտիվ ուսուցման առավելություններից մեկն էլ հենց դասի ընթացքի դինամիկությունն է, ինչը բնորոշ է այսօրվա սովորողների խառնվածքին: Ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ունակությունը խթանող, դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից են մտագրոհը, անակնկալ հարցադրումը, հինգրոպեանոց շարադրանքը, խառնված հերթականություն, գաղափարների զամբյուղ և այլ հնարներ: Այս մեթոդների միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ կարևոր է մտքերի քանակը, կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Եթե մտավախություն կա, որ դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ բանավոր պատասխանելուց, ապա հարմար տարբերակ է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը, հինգրոպեանոց շարադրանքը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը բանավոր մտագրոհին չի փոխարինում, պարզապես լրացնում է:

Կենսաբանության դասաժամի դինամիկ ընթացքն ապահովելու համար կարելի է կիրառել մի շարք այլ փոխգործուն մեթոդական հնարներ, որոնցից են՝ շրջանը, վերնագրեր մեթոդը, զանազան աղյուսակներ, մետաիմացության թերթիկներ, ճիշտ է, թե ճիշտ չէ, խառնված հերթականություն և այլն: Այնուամենայնիվ հարկ է նկատել, որ ցանկացած մեթոդ կիրառելիս ուսուցիչը պետք է վստահ լինի մեթոդի արդյունավետության, իրատեսության մեջ:

Սովորողը նույնպես դժվարություններ ունի հարմարվելու ակտիվ ուսուցմանը, ինքնքկրթության մեթոդներին, ուստի ուսուցչի խնդիրն է նրան հասկանալի դարձնել,

թե ինչ է անելու,ինչպես և ինչու: Սովորողը պետք է տեղյակ լինի, թե ինչ են ակնկալում իրենից, վստահ լինի, որ ուսուցիչն իրեն աջակցելու, օգնելու և առաջնորդելու է: Պարզ է, որ շատ ու շատ մեթոդների իմացությունը անհրաժեշտ է, բայց դեռ բավարար չէ դրանք հմտորեն կիրառելու, ակնկալիքներն արդարացնելու, նորարարությունն ապահովելու և բարեփոխումները իրականացնելու համար: Ծանր, աշխատատար ու լուրջ պատասխանատվություն ունի ուսուցիչը: Ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորոցնել և ինչու՞ սովորեցնել հարցադրումները կազմում են ուսուցման գործընթացի միջուկը, որտեղ մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր: Վերջին հաշվով՝ ուսուցչի նպատակն է, որ խմբային աշխատանքների ժամանակ սովորողն ակամայից ներգրավվի դասի ընթացքին, փորձի իր ներդրումը բերել խմբին աշխատանքը վերջնարդյունքին հասնելու համար: Իսկ ահա անհատական աշխատանքների իրականացման ժամանակ ուսուցման գործընթացի կենտրոնում սովորողի անհատականությունն է: Հաճախ սովորողի անհատական արդյունքները զարմացնող են լինում, քանի որ, երբ վերջինս գիտակցում է, որ հիմնական պատասխանատվությունը հենց իր վրա է, հավաքում է իր ողջ ներուժն ու գերազանց կատարում տրված առաջադրանքը: Ահավասիկ, ուսումնական ընթացքի հաջողությունը մեծապես կախված է հենց ուսուցչի աշխատանքի ձևից, ուստի ուսուցիչը պետք է ունենա աշխատանքի իր հաջողված մոտեցումը՝ յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններին համապատասխան:

Այս համատեքստում ուսուցիչը պետք է՝

●Աշակերտին հնարավորություն տա ինքնուրույն զննել, ենթադրություններ անել, հայտնաբերել, կռահել, ճանաչել, համեմատել, ինչը ժամանակակից մանվարժությունն անվանում է գիտելիքների կառուցում:

●Ուսուցման բովանդակությունը համապատասխանեցնի աշակերտների հետաքրքրություններին::

●Ստեղծի այնպիսի հաղորդակցական իրավիճակներ, որոնք հրապուրիչ կլինեն աշակերտների համար:

●Աշակերտների առջև դնի իրական, հաղթահարելի խնդիրներ և նպատակներ, որպեսզի յուրացնան ընթացքում նրանք զգան հաջողության հաճույքը:

●Խրախուսի հաջողությունը, գնահատի առաջընթացը:

●Ամեն կերպ խրախուսի սովորողի նախաձեռնողականությունը, ցույց տա կարեկցանք, այսինքն՝ աշակերտը իմանա, որ ուսուցիչը միշտ կօգնի իրեն, բայց ուզում է, որ նա ինքնուրույն աշխատի և գտնի խնդրի լուծումը:

●Ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ սովորողը կկարողանա հաղթահարել իր վախերն, հասկանալ, որ ձախողումը ոչ մի վատ բան չունի իր մեջ ու կիսվել իր ստեղծարար գաղափարներով:

●Առաջարկել գաղափարներ, բայց չխառնվել, այսինքն՝ չմիջամտել, թույլ տալ իրավիճակից դուրս գալու ելք գտնել ինքնուրույն, որը հաճախ կարող է ունենալ նույնիսկ անսովոր և նորովի լուծում:

Այսպիսով, սովորողի թե' հաջողությունների, թե' պարտությունների համար իր պատասխանատվության հիմնական բաժինն ունի ուսուցիչը, ում համակողմանի աշխատանքի արդյունքը ինքնուրույն, նախաձեռնող ու ստեղծարար սերունդն է:

Ստեղծագործական կարողություններ	
1	մտքի սահունություն (գաղափարների քանակը)
2	մտքի ճկունություն (մի գաղափարից մյուսին անցնելու ունակություն)
3	ինքնատիպություն (գաղափարներ ստեղծելու ունակություն)
4	հետաքրքրասիրություն
5	ֆանտաստիկա

Ստեղծագործությունը խթանելու ուղիներ	
1	բարենպաստ մթնոլորտի ապահովում, ուսուցչի կողմից բարի կամք, երեխային քննադատելուց նրա հրաժարումը
2	երեխաներին ակտիվորեն հարցեր տալու հնարավորություն տալը

3	երեխայի միջավայրի հարստացում նոր առարկաների և խթանների լայն տեսականիով, որպեսզի զարգացնի նրա հետաքրքրասիրությունը.
4	բնօրինակ գաղափարների արտահայտման խրախուսում
5	խնդիրներ լուծելու ստեղծագործական մոտեցման անձնական օրինակի օգտագործումը
6	պրակտիկայի հնարավորությունների ապահովում

Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակի գնահատում	
1	**ուշադրություն**(ստեղծագործական խնդիրը տեսնելու և բացահայտելու կարողություն)
2	**ճկունություն**(ստանդարտ տեսակետի մերժում)
3	**ինքնատիպություն**(կաղապարի մերժում)
4	**փոփոխականություն**(գաղափարները և կապերը վերախմբավորելու ունակություն)
5	**կոնկրետություն**(առաջադրանքը խորապես վերլուծելու ունակություն)
6	**վերացականություն**(սինթեզելու ունակություն)

7	**ներդաշնակություն**(կազմակերպչական ներդաշնակության և գաղափարական ամբողջականության վրա հիմնված գաղափարների առաջացում)
8	**անկախություն**(ուրիշի կարծիքի ազդեցության տակ դատողություններ և գնահատականներ չընդունելը)
9	**ընկալման բացություն**(նոր, անսովոր զգայունություն)
10	**բազմակողմանիություն**(առաջադրանքի մեջ ավելի շատ կողմեր և կապեր նկատելու ունակություն)

Ոչ ստանդարտ դասերի վարումը ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման մոտեցում

Ոչ ստանդարտ դասերը դասավանդման արտասովոր մոտեցումներ են: Նրանց նպատակը պարզ է՝ վերակենդանացնել ձանձրալին, գրավել ստեղծագոր–ծությամբ:Ոչ ստանդարտ դասերին բոլորը հնարավորություն են ունենում իրենց դրսևորել հաջողության մթնոլորտում, և դասարանը դառնում է ստեղծագործական թիմ: Այս դասերը ներառում են մեթոդների ամբողջ բազմազանությունը, հատկապես, ինչպիսիք են խնդրի վրա հիմնված ուսուցումը, որոնման գործողությունները, միջառարկայական և ներառարկայական հաղորդակցությունները և այլն: Լարվածությունը թուլանում է, մտածողությունը՝ աշխուժանում, ոգևորվում, և մեծանում է հետաքրքրությունն ընդհանուր առարկայի նկատմամբ:

Կենսաբանության դասավանդման ժամանակ ոչ ստանդարտ դասերի վարումը օժանդակում է երեխաների ստեղծագործական հմտությունների զարգացմանը և նրանց անհատական ստեղծագործական կարողությունների բացահայտմանը, այսինքն՝ նպաստում են սովորողների մայրենի լեզվով գրագետ հաղորդակցվելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, ինքնադրսևորվելու, գնահատելու և այլ կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը : Աշխատանքի

այս տեսակն ակտիվացնում է սովորողների մտավոր և խոսքային գործունեությունը, զարգացնում նրանց երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, հետաքրքրությունը և՛ առարկայի, և՛ մատուցվող թեմայի նկատմամբ:

Կենսաբանության դասավանդման առավել արդյունավետ և կիրառելի ոչ ստանդարտ դասի տեսակներ են՝

- **Դաս – խաղերը**
- **Դասեր՝ մրցույթներ, վիկտորինաներ**
- **Դաս- Ի՞նչ. Որտե՞ղ, Ե՞րբ**
- **Դաս- «Կլոր սեղանի շուրջ»**
- **Դաս – սեմինար**
- **Դաս – թեստ**
- **Կատարողական դաս**
- **Դաս – խճանկար**
- **Դաս - գիտելիքների փոխանակում**
- **Նախագծերի մեթոդ**

Եվ ինչքան էլ մեթոդները շատ են ու տարբեր, այդուամենայնիվ ցանկացած ակադեմիական առարկայի իրական յուրացում անհնար է առանց երևակայության ակտիվ գործունեության, առանց դասագրքում գրվածը, ուսուցչի ասածը պատկերացնելու ունակության, առանց տեսողական պատկերներով գործելու ունակության:

Այսպիսով, երեխայի երևակայությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ է բացառապես պատշաճ առաջնորդություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը: Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելիս կնպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը այսօր արդիական ու խրախուսելի է համակողմանի զարգացած անհատականություն ձևավորելու գործում:

Սույն հետազոտության մեջ հաշվի առնելով ուսումնասիրված թեմայի նպատակներն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

●նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը

● նախաձեռնողականություն, ինքնուրույնություն ու ստեղծարարություն ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն

●կրթության ոլորտի արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ զարգացնելու, ինչպես նաև վերջիններիս դասապրոցեսի մեջ ավելի արդյունավետ ներգրավելուն

●Կենսաբանության դասավանդման շրջանակներում ճիշտ պլանավորված դասի ընթացքը կարող է մեծապես նպաստել սովորողների մոտ գիտելիքների ամրակայումից բացի գործնական կարողություններ ձևավորելուն

●կենսաբանության դասավանդման ժամանակ հիմնական ակադեմիական գիտելիքների ստացմանը զուգահեռ սովորողը լայն հնարավորություններ ունի հանդես գալ իր նորարարական գաղափարներով, ինչը հնարավոր է միայն ուսուցչի հետ ճիշտ ու կառուցողական համագործակցության դեպքում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Արնաուդյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ.Պետրոսյան – Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Երևան, 2004թ:

2. Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014թ:

3. Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան, «ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում»:

4.https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

5. Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017.